ՈՒՍՏԱՐԻ 2026-2027 / ANNÉE UNIVERSITAIRE 2026-2027
Փորձնական քննություններ/ Examens blancs

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ/SCIENCES SOCIALES

Քննության տևողությունը՝ 2.5 ժամ / Durée d'examen: 2.5 heures

Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը գնահատվում է 1 միավոր: Միայն պատասխանի, պատասխանի բացակայության, ինչպես նաև մեկից ավելի պատասխաններ նշելու դեպքում՝ 0 միավոր:		
1.	Օրենքներն օժտված են.	ա/ բարձրագույն իրավաբանական ուժով բ/ կարգավորում են հասարակական հարաբերությունները գ/ սահմանում են վարքագծի համապարտադիր կանոներ դ/ ընդունվում է Ազգային ժողովի կողմից
2.	Անձի կողմից հանրորեն վտանգավոր արարքի նախատեսումը և կատարումը.	ա/ դիտավորություն է բ/ անզգուշություն է գ/ ինքնավստահություն է դ/ անտարբերություն է
3.	Ինչպիսի՞ն է դատական համակարգի աստիճանակությունը Հայաստանում:	ա/ վճռաբեկ-վերաքննիչ-առաջին ատյանի դատարան բ/ առաջին ատյանի-վերաքննիչ-վճռաբեկ դատարան գ/ վերաքննիչ-վճռաբեկ-առաջին ատյանի դատարան դ/ սահմանադրական-վճռաբեկ-առաջին ատյանի դատարան
4.	Քրեական գործով վերաքննիչ դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտի հրապարակման պահից.	ա/ մեկամսյա ժամկետում բ/ տասնհինգօրյա ժամկետում գ/ երեսունօրյա ժամկետու դ/ հինգօրյա ժամկետում
5.	Ի՞նչ է պայմանագիրն ըստ էության.	ա/ հակասություն բ/ հարաբերություն գ/ համաձայնություն դ/ հաշվենկատություն
6.	Հոգեկան խանգարման հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքը.	ա/ անվավեր է բ/ վիճահարույց է գ/ առոչինչ է դ/ շինծու է

7.	Իրավական պատասխանատվության գործառույթ չէ.	ա/ զրկող-պատժող բ/ վերականգնող-հատուցող գ/ կանխող-դաստիարակող դ/ վերականգնող-հաստատող
8.	Փաստաբանական ծառայությունը.	ա/ կառավարական հատուկ կազմակերպություն է բ/ ոչ կառավարական հատուկ կազմակերպություն է գ/ հանրային մարմին է դ/ տեղական ինքնակառավարման մարմին է
9.	Դատախազությունը.	ա/ հասարակական համակարգ է բ/ քաղաքական համակարգ է գ/ միասնական կենտրոնացված համակարգ է դ/ միասնական ապակենտրոնացված համակարգ է
10.	Ո՞ր տեսության համաձայն՝ սոցիալիզմին պետք է փոխարինի կոմունիզմը.	ա/ լիբերալիզմ բ/ մարքսիզմ գ/ կոնսերվատիզմ դ/ նացիոնալիզմ
11.	Աշխատողը.	ա/ օրենքով սահմանված տարիքի հասած կին է բ/ օրենքով սահմանված տարիքի հասած տղամարդ է գ/ օրենքով սահմանված տարիքի հասած քաղաքացի է դ/ օրենքով սահմանված տարիքի հասած գործունակ քաղաքացի է
12.	Նոտարական ձևը չպահպանելը.	ա/ հանգեցնում է գործարքի կնքմանը բ/ հանգեցնում է գործարքի կայացմանը գ/ հանգեցնում է գործարքի վերացմանը դ/ հանգեցնում է գործարքի առոչնչությանը
13.	Կախված ծագման հիմքերից պարտավորությունները լինում են.	ա/ համաձայնեցված և պայմանագրային բ/ հանձնարարված և պայմանագրային գ/ կամավոր և ոչ կամավոր դ/ պայմանգրային և արտապայմանգրային
14.	Նախավճարի մասին համաձայնությունը կնքվում է.	ա/ գրավոր և բանավոր բ/ բանավոր գ/ գրավոր դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
15.	Որտե՞ղ է ընդունվել «Մարդու իրավունքների և հիմնական ազատու-թյունների պաշտպանության մասին» եվրոպական համաձայնագիրը.	ա/ Հաագայում բ/ Հռոմում գ/ Ստրասբուրգում դ/ Փարիզում
16.	Մարդու իրավունքների եվրոպական Եվրադատարանի դատավորի լիազորությունները դադարում են.	ա/ 65 տարեկանում բ/ 60 տարեկանում գ/ 70 տարեկանում դ/ անժամկետ են

17.	Քաղաքականություն եզրույթի առաջացումը կապվում է.	ա/ Հին Հռոմի հետ բ/ Հին Հունաստանի հետ գ/ Հին Եգիպտոսի հետ դ/ Հին Միջագետքի հետ
18.	Պետությունը.	ա/ տարածք է բ/ քաղաքական կազմակերպություն է գ/ հանրային իշխանություն է դ/ պատասխաններից մեկը ճիշտ չէ
19.	Նախնադարյան իշխանությունը.	ա/ առանձնացված էր բ/ անմիջական էր գ/ հանրային էր դ/ բոլոր պատասխանները ճիշտ են
20.	Նշվածներից ո՞րն է հանրապետության տեսակ:	ա/ վաղ ավատական բ/ դուալիստական գ/ սոցիալիստական դ/ դասային ներկայացուցչական
21.	Կուսակցությունների մասին առաջին անգամ հիշատակվել է.	ա/ ԱՄՆ-ի սահմանադրության մեջ բ/ Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրում գ/ Մարդու և քաղաքացու հիմնական ազատությունները փաստաթղթում դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
22.	Ազատականության ակունքներին մոտ կանգնած չէ.	ա/ Կ.Մարքսը բ/ Ի.Կանտը գ/ Ջ.Լոքը դ/ Թ.Ջեֆիրսոնը
23.	Ե՞րբ Եվրոպայում զարգացվեց սոցիալական պետություն տեսությունը.	ա/ քսաներորդ դարի 50-ական թթ. բ/ քսաներորդ դարի 60-ական թթ. գ/ տասնութերորդ դարի սկզբին դ/ տասնութերորդ դարի վերջին
24.	Ազգայնամոլություն կամ.	ա/ շովինիզմ բ/ կոնսերվատիզմ գ/ մարքսիզմ դ/ նացոնալիզմ
25.	Ո՞վ է պոսիբիլիզմի հայեցակարգի հեղինակը.	ա/Վիդալ Բլաշը բ/Յուխան Չելենը գ/Ալֆրեդ Մեխենը դ/Հելֆորդ Մաքենդերին
26.	Ե՞րբ է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ):	ա/ 1921 թ. բ/ 1922 թ. գ/ 1923 թ. դ/ 1924 թ.

27.	Ո՞ր պետությունների միջև էր վիճելի տարածք համարվում Սաարի մարզը.	ա/ Ֆրանսիայի և Գերմանիայի բ/ Իտալիայի և Հարավսլավիայի գ/ Հունգարիայի և Սերբիայի դ/ Մակեդոնիայի և Սերբիայի
28.	Ժառանգին ժառանգությունից մեկուսացնելու հիմք է.	ա/ ժառանգատուի վերջին կամքի կատարմանը խոչնդոտելը բ/ ժառանգատուի կամ հնարավոր ժառանգներից մեկի սպանությունը գ/ ժառանգատուի կամ հնարավոր ժառանգներից մեկի նկատմամբ կատարված մահափորձը դ/ դատարանի վճիռը կամ դատավճիռը
29.	Վարչական իրավախախտումը.	ա/ հանցանք է բ/ զանցանք է գ/ հանցանք և զանցանք է դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
30.	Դատական գործի քննության կարգի խախտումը քննում է.	ա/ վերաքննիչ դատարանը բ/ վճռաբեկ դատարանը գ/ սահմանադրական դատարանը դ/ ընդհանուր իրավասության դատարանը
31.	Ո՞ր սանկցիաների պարագայում են առկա ազդեցության ներքին և վերին սահմաններ.	ա/ այլընտրանքային բ/ բացարձակ որոշակի գ/ հարաբերական-որոշակի դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
32.	Շինծու գործարքը.	ա/ վիճահարույց է բ/ առոչինչ է գ/ վավեր է դ/ անվավեր է
33.	Անձին միջին ծանրության վնաս պատճառելու պատասխանատվության տարիքը.	ա/ տասնհինգն է բ/ տասնչորսն է գ/ տասնվեցն է դ/ տասնութն է
34.	Իրավական պատասխանատվության սկզբունք չէ.	ա/ անհատականացման սկզբունքը բ/ անխուսափելիության սկզբունքը գ/ անկողմնակալության սկզբունքը դ/ հավասարության սկզբունքը
35.	Պարտավորության կատարման լրացուցիչ եղանակ չէ.	ա/պարտապանի գույքի պահումը բ/ երաշխիքը գ/ հաշվանցումը դ/ տուժանքը
36.	Կոլեկտիվ աշխատանքային վեճերի քննարկման պարտադիր փուլ է.	ա/ դատարանը բ/ գործադուլը գ/ հաշտեցման հանձնաժողովում քննարկումը դ/ աշխատողների համաժողովում քննարկումը

37.	Եթե օրենքով այլ բան նախատեսված չէ, ընդհանուր իրավասության դատարանի միջանկյալ դատական ակտերը օրինական ուժի մեջ են մտնում.	ա/ մեկ ամսից բ/ տասնհինգ օրից գ/ կայացման պահից դ/ հավանության պահից
38.	Վճռաբեկ դատարանի որոշումն օրինական ուժի մեջ է մտնում.	ա/ հրապարակման պահից բ/ տաս օրից գ/ մեկ ամսից դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
39.	Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագիրն ընդունվել է.	ա/ 1959թ. բ/ 1966թ. գ/ 1996թ. դ/ 1950թ.
40.	Մարդու իրավունքների երկրորդ սերունդը եկավ լուծելու.	ա/ հավասարության խնդիրը բ/ համերաշխության խնդիրը գ/ եղբայրության խնդիրը դ/ սոցիալական խնդիրը
41.	Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը մշակվել է.	ա/ Վաշինգտոնում բ/ Մոսկվայում գ/ Սան Ֆրանցիսկոյում դ/ Ստրասբուրգում
42.	Միջազգային իրավական պատասխանատվությունը լինում է.	ա/ նյութական և հոգևոր բ/ արտաքին և ներքին գ/ քաղաքական և ոչ քաղաքական դ/ քաղաքական և նյութական
43.	Ո՞վ է հանդիսանում «գեոպոլիտիկա» եզրույթի հեղինակը.	ա/ Շ.Մոնտեսքյոն բ/ Զ.Բժեզինսկին գ/ Յ.Չելենը դ/ Ֆ.Ռատցելը
44.	Ազատական աշխարհայացքը սկզբից ևեթ ձգտում էր.	ա/ ազատության տարբեր ձևերի կատարելատիպի ընդունմանը բ/ անհատական կատարելատիպի ընդունմանը գ/ անհատական ազատության կատարելատիպի ընդունմանը դ/ խմբային կատարելատիպի /ընդունմանը
45.	Փաստաբանական համակարգը.	ա/ կառավարական հատուկ կազմակերպություն է բ/ ոչ կառավարական հատուկ կազմակերպություն է գ/ հանրային մարմին է դ/ տեղական ինքնակառավարման մարմին է
46.	Ե՞րբ է ստեղծվել հայկական առաջին ավանդական կուսակցությունը.	ա/ 1887 թվականին բ/ 1988 թվականին

		գ/ 1885 թվականին դ/ 1985 թվականին
47.	Գործադուլ անելու իրավունք ունեն.	ա/ ոստիկանները բ/ բժիշկները գ/ անհետաձգելի բժշկական օգնության ծառայողները դ/ զինված ուժերում ծառայողները
48.	Քաղաքական համակարգի գործունեությունը չի կարգավորվում.	ա/ իրավական նորմերով բ/ քաղաքական նորմերով գ/ քաղաքացիական նորմերով դ/ բարոյական նորմերով
49.	Ո՞ր աշխատության հեղինակն է Ժան Բոդենը.	ա/ «Օրենքների ոգու մասին» բ/ «Պատմության ուսումնասիրության դյուրին մեթոդը» գ/ «Պետությունը որպես կենսաձև» դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
50.	10-րդ դարից սկսած Արցախը անվանել են.	ա/ Խաչեն բ/ Դիզակ գ/ Գանձակ դ/ Ղարաբաղ
51.	«Միավորված ազգեր» անվանումն առաջարկել է.	ա/ Թոդոր Ռուզվելտը բ/ Ֆրանկլին Ռուզվելտը գ/ Ջորջ Բուշը դ/ Թովմաս Ջեֆերսոնը
52.	Ու՞մ կողմից կարող են առաջադրվել օրենքների նախագծեր ՀՀ–ում.	ա/ քաղաքացիների բ/ աշխատավորների գ/ կառավարության և Ազգային ժողովի պատգամավորների դ/ քաղաքացիների, ընտրողների, նախագահի, դատավորների
53.	Աշխարհիկացում կամ.	ա/ ֆրակցիաներ բ/ սեկուլյարիզացիա գ/ սատիսկֆակցիա դ/ սպեկուլյացիա
54.	Առաջին աշխարհամարտին մասնակցել է.	ա/ 48 երկիր բ/ 38 երկիր գ/ 58 երկիր դ/ 28 երկիր
55.	Եվրոպական միության անդամ պետություն չէ.	ա/ Լուքսենբուրգը բ/ Շվեդիան գ/ Հունգարիան դ/ Վատիկանը.
56.	Քաղաքացիական հասարակության հայեցակարգը կապվում է.	ա/ Գ.Հեգելի անվան հետ բ/ Ի. Կանտի անվան հետ գ/ Կ. Մարքսի անվան հետ

		դ/ ճիշտ են ա և բ պատասխանները
57.	1981թվականին Եվրոմիությանն անդամակցել է.	ա/ Կիպրոսը բ/ Հունաստանը գ/ Էստոնիան դ/ Դանիան
58.	Կառավարման միահեծանական ձև ուներ.	ա/ Արշակունյաց թագավորությունը բ/ Բագրատունիների թագավորությունը գ/ Վանի թագավորությունը դ/ Ռուբինյանների թագավորությունը
59.	Միջազգային իրավունքի հատուկ աղբյուր է.	ա/ իրավունքի ընդհանուր սկզբունքները բ/ միջազգային դատարանների որոշումները գ/ արբիտրաժների որոշումները դ/ ճիշտ պատասխանը բացակայում է
60.	«Ազգային շահ»հասկացությունը շրջանառության մեջ է մտել.	ա/ 1945 թվականին բ/ 1955 թվականին գ/ 1935 թվականին դ/ 1953 թվականին
Ընտրել ճիշտ տարբերակը կամ պատասխանը: Յուրաքանչյուր ճիշտ ընտրությունը՝ 2 միավոր: Միայն պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում՝ 0 միավոր:		
61.	Քրեական գործը քննող մարմինը հրավիրում է քաղաքացի Ա-ին հարցաքննության՝ իր կողմից որդեգրված քաղաքացի Բ-ի կատարած իրավախախտման մասին վկայություն տալու՝ նշելով, որ քաղաքացի Ա-ն պարտադիր պետք է ներկայանա և գործով ցուցմունք տա։ Ինչպե՞ս կարող է վարվել Քաղաքացի Ա-ն.	ա/ իրավունք ունի հրաժարվել ցուցմունք տալուց բ/ պարտավոր է վկայել (ցուցմունք տալ) քաղաքացի Բ-ի դեմ գ/ մերձավոր ազգականի դեմ ցուցմունք տալ չի թույլատրվում դ/ ճիշտ են «ա» և «գ» պատասխանները
62.	Եթե կտակարարը ժառանգությունից զրկել է պարտադիր բաժնի իրավունք ունեցող անձին, ապա՝	ա/ կտակը համապատասխան մասով անվավեր է բ/ կտակը համապատասխան մասով վիճահարույց է գ/ կտակը համապատասխան մասով առոչինչ է դ/ կտակը իրավական ուժ չունի
63.	Ներկայացված տարբերակներից ո՞րը միջազգային իրավական նյութական պատասխանատվության տեսակ չէ.	ա/ ռեպարացիա բ/ ռեստիտուցիա գ/ սուբստիտուցիա դ/ ռեստորացիա
64.	Ու՞մ վրա է դրված խաղաղության և միջազգային անվտանգության համար գլխավոր պատասխանատվությունը.	ա/ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բ/ Ազգային անվտանգության խորհրդի գ/ ՆԱՏՕ-ի դ/ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության

65.	Հայաստանում պատերազմ է, բավարար զինվոր չկա. բանակը համալրելու նպատակով գործող կառավարությունը որոշում է 13 տարին լրացած բոլոր տղաներին և աղջիկներին զորակոչել: Նշել Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայով սահմանված վերաբերելի իրավունքը.	ա/ անկախ տարիքից՝ արգելվում է աղջիկներին և կանանց ներգրավել ռազմական գործողությունների մեջ բ/ ընդհանրապես արգելվում է երեխաներին ներգրավել ռազմական գործողությունների մեջ գ/ արգելվում է մինչև 15 տարեկան անձանց ներգրավել ռազմական գործողությունների մեջ դ/ բոլոր պատասխանները սխալ են
66.	Կարգապահական տույժը կարող է կիրառվել.	ա/ խախտումը հայտնաբերելուց հետո մեկ ամսվա ընթացքում բ/ խախտումը կատարելու օրվանից վեց ամիս անց գ/ խախտումը հայտնաբերելու պահին դ/ եթե չի հայտնաբերվում առդիտի ընթացքում, ապա խախտումը կատարելու օրվանից մեկ տարի անց
67.	Նշվածներից ո՞րը միջազգային իրավունքի սկզբունք չէ.	ա/ ինքնիշխան հավասարության սկզբունքը բ/ պետությունների ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը գ/ տարածքային ամբողջականության սկզբունքը դ/ զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը
68.	Օրենքները իրենց բովանդակությամբ պետք է համապատասխանեն.	ա/ Արդարության, իրավահավասարության, մարդասիրության, ազատության սկզբունքներին բ/ Արդարության, ազատության, միասնության, հավասարության սկզբունքներին գ/Համերաշխության, հավասարության, մարդասիրության, ազատության սկզբունքներին դ/ Եղբայրության, հավասարության, արդարության, մարդասիրության սկզբունքներին
69.	Ներկայացված տարբերակներից որն է սխալ. Ոչ իրավական օրենքի դեմ պայքարի երաշխիք է՝	ա/ ժողովրդաիշխանության սկզբունքը բ/ սահմանադրական և ընդհանուր դատական վերահսողությունը գ/ իրավաստեղծ գործունեության բարդ և ձևականացված բնույթը դ/ հասարակության մեջ ուժային պետական կառույցների քաղաքական և իրավական կարգավիճակը
70.	Ստորև նշված օրինակը միջազգային իրավական պատասխանատվության ո՞ր ձևին է պատկանում. «Իրավախախտ պետությունից ապրանքների ներկրման արգելք (էմբարգո)»	ա/ ռեպարացիա բ/ սուբստիտուցիա գ/ ռեպրեսալիա դ/ ռեստորացիա

Չորս բաղադրիչով հարց-առաջադրանքներ

Գտնել ճիշտ կապերն ու համապատասխանությունները աջ և ձախ սյուներում տրված հասկացությունների, երևույթների միջև:

Պատասխանները գրանցել առաջադրանքից հետո գետեղված աղյուսակում՝ համապատասխան թվի տակ նշելով ճիշտ պատասխանի տառը:

Պատասխանի ներկայացման այլ տարբերակները չեն գնահատվելու:

Յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավոր, առաջադրանքի ամբողջական ճիշտ պատասխանը՝ չորս միավոր:

71. Համապատասխանեցնել գաղափարը հեղինակին.

1. Կ. Հաուսհոֆեր	ա/ «5 ծովերով եզրավորված ցամաքի» գաղափար
2. Զ. Բժեզինսկի	բ/ «Պոսիբիլիզմի» հայեցակարգ
3. Ա. Մեխեն	գ/ «Մեծ տարածքների» գաղափար
4. Պոլ Վիդալ Բլաշ	դ/ «Ծովային ուժի հայեցակարգ»

1	2	3	4

72. Համապատասխանեցնել պետության տեսակները դրանց ենթատեսակներին.

1. Անսահմանափակ միապետություն	ա/ նախագահական
2. Հին աշխարհի հանրապետություն	բ/ հին արևելյան միահեծանություն
3. Արդի հանրապետություն	գ/ արիստոկրատական
4. Սահմանափակ միապետություն	դ/ դուալիստական

1	2	3	4

73. Համապատասխանեցնել հատկանիշները հասկացություններին.

1. Պետական տարածք	ա/ իրավահավասարություն
2. Պետական իշխանություն	բ/ անձեռնմխելիություն
3. Ներքին ինքնիշխանություն	գ/ լեգիտիմություն
4. Արտաքին ինքնիշխանություն	դ/ իշխանության գերակայություն

1	2	3	4

74. Համապատասխանեցնել գործարքների տեսակները.

1. Երկկողմանի գործարք	ա/ շինծու
2. Կամքի արատով գործարք	բ/ կտակ
3. Անվավեր գործարքի հատուկ տեսակ	գ/ պայմանագիր
4. Միակողմանի գործարք	դ/ ստրկացուցիչ

1	2	3	4

75. Համապատասխանեցնել ենթաօրենսդրական ակտերը.

1. Ընդհանուր	ա/ նախարարության հրահանգ
2. Ներկազմակերպական	բ/ կառավարության որոշում
3. Գերատեսչական	գ/ ՏԻՄ–ի նորմատիվ իրավական ակտ
4. Տեղական	դ/ դպրոցի տնօրենի հրաման

1	2	3	4